Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիր
93-30. 1-Ղ4-1 վարչության պետ(2024-03-06)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի անվանում, ծածկագիր

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ | Քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն | Վարչության պետ, (93-30. 1-Ղ4-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Մարզպետին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության Բաժնի պետը և Վարչության աշխատողները:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության Բաժնի պետը կամ գլխավոր ինժեներներներից մեկը կամ գլխավոր ճարտարագետը կամ գլխավոր ճարտարագետ-շինարարը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, քաղաք Արմավիր, Աբովյան 71:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. սահմանված կարգով կազմակերպում է մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերի կազմումը և ներկայացնում Մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար.
2. կազմակերպում է միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում ներառված բնակավայրերի համակցված փաստաթղթում լրացում կատարելու և առանձին հողամասի նպատակային նշանակությունը փոխելու աշխատանքների իրականացումը
3. ապահովում է Մարզպետին եզրակացություն տալը հանրապետական տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ.
4. իր իրավասության սահմաններում ապահովում է բնակարանային և այլ շինարարություն, իրականացնում է կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթներ, քաղաքաշինական

գործունեության վերահսկողություն, ինչպես նաև ապօրինի շինարարության կանխման, կասեցման և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների վերահսկողությունը.

5. հաստատված քաղաքաշինական ծրագրերին համապատասխան ապահովում է քաղաքաշինական գործունեության օբյեկտների ընտրությունը, ներդրումների չափի որոշումը, պայմանագրային հիմունքներով օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներին և շինարարություն իրականացնողներին ներգրավումը.
6. ապահովում է մարզային նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների, այլ ինժեներական կառույցների շինարարությունը, պահպանումը և շահագործումը.
7. ապահովում է աջակցություն հանրապետական նշանակության ճանապարհների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը.
8. ապահովում է համաձայնություն գալու գործընթացը կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ, մինչ շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում.
9. ապահովում է վերահսկողությունը տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների գործունեության նկատմամբ քաղաքաշինության բնագավառում.
10. ապահովում է կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայնեցման գործընթացի իրականացումը՝ հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության դեպքում.
11. ապահովում է մասնակցություն տարածքային հատակագծման ուրվագծի և նախագծի մշակման համար լիազորված մարմնի կողմից կազմված առաջադրանքի համաձայնեցման գործընթացում, առաջարկություններ և դիտողություններ է ներկայացնում մշակված նախագծային փաստաթղթերի վերաբերյալ.
12. իրականացնում է իրավական հսկողություն՝ քաղաքաշինության բնագավառում սահմանված կարգով.
13. անցկացնում է ստուգումներ, ըստ անհրաժեշտության, տեղական ինքնակառավարման մարմիններում համապատասխան համայնքի վարչական տարածքում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս, ինչպես նաև քաղաքացիների դիմում-բողոքների հիման վրա.
14. իրականացնում է մշտադիտարկում մարզի տարածքում ոլորտում տիրող իրավիճակի վերաբերյալ.
15. հաստատված քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի բացակայության դեպքերում ապահովում է քաղաքաշինական գործունեության նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների համաձայնեցման իրականացումը և օրենսդրությամբ նախատեսված

դեպքերում առաջարկությունների վերաբերյալ եզրակացություններ է ներկայացնում Մարզպետին՝ պետական կառավարման համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնելու համար.

16. ապահովում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին, Մարզպետի պատվիրատվությամբ իրականացված աշխատանքների ավարտական, հանձնման-ընդունման գործընթացին առնչվող փաստաթղթերի (ակտերի) նախապատրաստումը.
17. ապահովում է համայնքի գլխավոր հատակագծի նախագծման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ.
18. ապահովում է բնակավայրի գոտիավորման նախագծի մշակման առաջադրանքի և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ.
19. ապահովում է ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների կողմից ներկայացված հողհատկացումների առաջարկությունների և նախագծային փաստաթղթերի համաձայնեցումների գործընթացը պետական կառավարման լիազոր մարմինների հետ.
20. Ապահովում է մարզի բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման, հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր կազմելու աշխատանքների իրականացումը.
21. ապահովում է թույլտվության տալը տեղական նշանակության հուշարձանների փոփոխման համար՝ լիազոր մարմնի եզրակացության հիման վրա.
22. ապահովում է համաձայնեցումը կամ հիմնավորված մերժումը առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառական նշանակության փոփոխության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությանը.
23. ապահովում է Հայաստանի Հանրապետության կարիքները բավարարելու համար նախատեսված և պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող կապալային շինարարական, նախագծային ու հետազոտական աշխատանքների իրականացման պետական պայմանագրերի կատարման աշխատանքների իրականացումը.
24. ապահովում է վերահսկողություն մարզի ուսումնական հաստատությունների, ինչպես նաև մարզային ենթակայության առողջապահական և սոցիալական ապահովության հաստատությունների շենքերի կառուցման, վերանորոգման, պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ.
25. ապահովում է հաղորդումների ներկայացումը Մարզպետին՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթման, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ կառուցապատման դեպքերի հայտնաբերման վերաբերյալ, օրենքով սահմանված համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար.
26. ապահովում է հսկողության իրականացումը համայնքային ենթակայության ջրմուղ-կոյուղու, ջրերի

մաքրման, բնականոն ջրամատակարարման և ջրահեռացման, բնակավայրերի կանաչապատման, մաքրման և աղբի ու թափոնների վերամշակման աշխատանքների իրականացման նկատմամբ.

27. ապահովում է հուղարկավորությունների կազմակերպման, գերեզմանատների և դիակիզարանների շահագործման գործընթացը.
28. ապահովում է առաջարկության ներկայացումը Մարզպետին մարզի տարածքով անցնող հանրապետական ուղևորատար երթուղիների վերաբերյալ.
29. կազմակերպում է անվտանգ երթևեկություն ապահովելու նպատակով մարզային ավտոմոբիլային կառույցների շահագործման պայմանները բարելավելու ուղղությամբ վերահսկողության իրականացումը.
30. ապահովում է մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի ուսումնասիրությունների իրականացնումը.
31. ապահովում է մարզի ճանապարհաշինության զարգացման հեռանկարային ծրագրերի նախապատրաստման աշխատանքները.
32. Ապահովում է մարզային ենթակայության ճանապարհների և տրանսպորտային կազմակերպությունների գործունեության մշտադիտարկման և արդյունքների հիման վրա Մարզպետին առաջարկություններ ներկայացնելու աշխատանքների իրականացումը.
33. ապահովում և ընդունում է պետական բյուջեով նախատեսված մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքները՝ համաձայն ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության ու շահագործման աշխատանքների մակարդակի գնահատման և ընդունման մեթոդիկայի.
34. ապահովում է միջմարզային երթուղիների ցանցի կազմակերպման հարցերով համագործակցությունը լիազոր մարմնի հետ.
35. ապահովում է մարզային ավտոճանապարհների վիճակի ուսումնասիրության և դրանց դասակարգման աշխատանքները.
36. ապահովում է մարզային ավտոճանապարհների պահպանության և շահագործման աշխատանքների նկատմամբ հսկողություն իրականացնումը, ինչպես նաև մարզային ավտոճանապարհների պահպանության պահանջվող մակարդակների գնահատման աշխատանքների իրականացումը.
37. կազմակերպում է հողաշինության և հողօգտագործման բնագավառում վերահսկողության իրականացումը.
38. կազմակերպում է հողային հարաբերությունների բնագավառում՝ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների գործունեության նկատմամբ հսկողության իրականացումը.
39. կազմակերպում է համայնքների հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաների, բնակավայրերի գլխավոր հատակագծերի նկատմամբ հսկողության իրականացումը.
40. կազմակերպում է պետական և համայնքային սեփականության հողամասերի տրամադրման, հետ վերցնելու, հողերի պահանության միջոցառումների նկատմամբ հսկողության իրականացումը.

41. կազմակերպում է հողաշինարարության, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը.
42. կազմակերպում է մարզի սահմանանիշերի պահպանման նկատմամբ հսկողության իրականացումը:
43. Կազմակերպում է է ապօրինի հողօգտագործման կանխարգելման, կասեցման և վերացման աշխատանքները մարզի համայնքների տարածքներում.
44. Կազմակերպում է առաջարկության ներկայացնումը համայնքների միջև ծագող հողային վեճերի լուծման վերաբերյալ.
45. Կազմակերպում է համայնքներին փոխանցված հողամասերի արդյունավետ օգտագործման վերաբերյալ կառավարության որոշման նախագծերի կազմման և Մարզպետին համաձայնեցման ներկայացման աշխատանքները.
46. Կազմակերպում է մարզի հողային հաշվեկշռի կազմման աշխատանքները.
47. Կազմակերպում է մարզի հողերի օգտագործման սխեմաները Մարզպետին ներկայացնելու աշխատանքները՝ ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնելու համար.
48. Կազմակերպում է հողի և ամրակցված գույքի սեփականատերերի և (կամ) հողօգտագործողների հետ՝ մարզի տարածքում մարզային ենթակայության օբյեկտների կառուցման համար համապատասխան հողի և ամրակցված գույքի օգտագործման և դրանց հետ կապված փոխհատուցումների վերաբերյալ պայմանագրերի նախագծերի ներկայացումը Մարզպետին.
49. կազմակերպում է Աշխատակազմ ստացված քաղաքացիների դիմումների, հարցումների քննարկումները և լուծում է դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգ ով:

Իրավունքները.

1. կազմել մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերը և ներկայացնել Մարզպետին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելու համար.
2. ներկայացնել առաջարկություններ Մարզպետին՝ մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ.
3. կազմակերպել բնակարանային և այլ շինարարություն, իրականացնել կապիտալ շինարարության և կապիտալ վերանորոգման պատվիրատուի գործառույթներ.
4. վերահսկել Մարզի քաղաքաշինական գործունեությունը.
5. կանխել, կասեցնել և վերացնել ապօրինի շինարարությունը.
6. հետևել Մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի ուսումնասիրությանը.
7. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին ներկայացնել հայտեր՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքի, ինչպես նաև ինժեներական ենթակառուցվածքներին միանալու տեխնիկական պայմաններ ստանալու համար.

8. ստուգել կապալառու կազմակերպության տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունների կողմից ներկայացված աշխատանքների ծավալները.
9. ուսումնասիրել բացահայտված ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման գործընթացի հիմքերը.
10. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ քննարկել՝ քաղաքաշինության ոլորտում առկա հիմնախնդիրները.
11. հավաքագրել համապատասխան տեղեկատվություն տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից՝ Մարզում քաղաքաշինական կադաստրի վարման գործընթացը կազմակերպելու նպատակով.
12. տեղական ինքնակառավարման մարմիններից պահանջել և ստանալ անհրաժեշտ փաստաթղթային հիմքեր՝ քաղաքաշինության բնագավառում նրանց գործունեության նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության իրականացման նպատակով.
13. լուծել Մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների կողմից բնակելի ֆոնդի պահպանման, շահագործման, նորոգման և սպասարկման կանոններին առնչվող խնդիրները.
14. Համագործակցել Մարզի շինարարական կազմակերպությունների հետ՝ ստանալով տեղեկատվություն տվյալ բյուջետային տարվա ընթացքում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ, հրավերներ ներկայացնել նախաորակավորման փուլին մասնակցելու համար:
15. իրականացնել լիազոր մարմնի կողմից կազմակերպած միջմարզային և ներմարզային ավտոբուսային կանոնավոր փոխադրումների երթուղային ցանցերի համաձայնեցում.
16. Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմման նպատակով հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն.
17. Հսկել մարզային ենթակայության ավտոճանապարհների և դրանց ճանապարհային երթևեկության կահավորանքի շինարարության, շահագործման, նորոգման և պահպանության աշխատանքները, տեղեկություններ հավաքագրել եղանակային պայմանների, Մարզի ավտոճանապարհներին տիրող իրավիճակի, ավտոտրանսպորտի անցանելիության մասին.
18. Պարբերական հսկողություն իրականացնել կապալառուի կողմից կատարվող աշխատանքի ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու կապալառուի գործունեությանը:
19. Վերահսկել աղբի և թափոնների վերամշակման աշխատանքների գործընթացը.
20. հետևել Վարչության համապատասխան ոլորտային մասնագետների մասնակցությ

ունը արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության մարզային միջոցառումներին.

21. Մարզի խորհրդի և տեղական ինքնակառավարման մարմինների խորհրդակցությունների ժամանակ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին և մասնակիցներին տալ պարզաբանումներ փոփոխված և նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ.
22. մասնակցել քաղաքաշինության ոլորտի առաջնային խնդիրների բացահայտմանը, պետական աջակցության ծրագրերի մշակմանը և իրականացման մոնիթորինգին.
23. Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) գիտությամբ, հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.
24. ըստ անհրաժեշտության ներկայացնել համապատասխան զեկուցումներ՝ իր կողմից սպասարկվող ոլորտին առնչվող համապատասխան մարմիններում, ինչպես նաև պաշտոնատար անձանց կողմից կատարվող աշխատանքների վիճակի մասին.
25. Գլխավոր քարտուղարին, ըստ անհրաժեշտության, ներկայացնել առաջարկություններ՝ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար.
26. այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստանալ Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր:
27. մշակել առաջարկություններ բնագավառին առնչվող օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ:

Պարտականությունները.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել Մարզի բնակավայրերի գլխավոր հատակագծերը.
2. Տրամադրել եզրակացություն տարածքային զարգացման ու տարաբնակեցման նախագծերի և ուրվագծերի վերաբերյալ.
3. համայնքներում ինքնակամ և քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին չհամապատասխանող շինարարության դեպքեր հայտնաբերելիս դիմել համապատասխան իրավասու մարմնին և տեղեկացնել պետական լիազոր մարմնին՝ ապօրինի շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման առաջարկությամբ.
4. հաստատված քաղաքաշինական ծրագրերին համապատասխան ընտրել քաղաքաշինական գործունեության օբյեկտներ, որոշել ներդրումների չափը, պայմանագրային հիմունքներով ներգրավել օբյեկտի քաղաքաշինական փաստաթղթեր մշակողներին և շինարարություն իրականացնողներին.

5. Կազմակերպել ընտրության գործընթաց՝ օբյեկտների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի մշակման, կապալառու կազմակերպությունների, շինարարության հեղինակային ու տեխնիկական հսկողության աշխատանքների իրականացման համար.
6. համապատասխան լիազոր մարմիններին ներկայացնել Մարզի քաղաքաշինության ոլորտի և բյուջետային ծախսերի միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերը
7. իրականացնել մշտադիտարկման աշխատանքներ Մարզի տարածքում ֆինանսական տարբեր միջոցներով կապիտալ շինարարություն և հիմնանորոգում իրականացնող պատվիրատու կազմակերպությունների գործունեության նկատմամբ.
8. ինժեներական սպասարկում իրականացնող ծառայություններից ստանալ օբյեկտների ինժեներական ենթակառուցվածքների նախագծման, կառուցման և շահագործման տեխնիկական պայմանների ապահովման աշխատանքները, ինչպես նաև փոխհատուցել կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտներին հասցվելիք վնասները.
9. իրականացնել մշտադիտարկում Մարզի քաղաքաշինական գործունեության, Մարզում սուբվենցիոն ծրագրերով ոլորտին առնչվող աշխատանքների, տրանսպորտի, ճանապարհաշինության, կապի, էներգետիկայի բնագավառում տիրող իրավիճակի նկատմամբ.
10. համաձայնեցնել առանց հողի կատեգորիայի փոփոխության՝ քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը.
11. լիազորված մարմնի եզրակացության հիման վրա տրամադրել տեղական նշանակության հուշարձանների փոփոխման թույլտվություն.
12. տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներից ստանալ Մարզի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանման փաստաթղթային փաթեթը՝ համապատասխան եզրակացությամբ, ներկայացնել վերադաս մարմինների համաձայնեցմանը.
13. Մարզպետին ներկայացնել առաջարկություն՝ Մարզի տարածքում գտնվող ճանապարհների փաստացի վիճակի վերաբերյալ.
14. Կազմել և գլխադասային մարմնին ներկայացնել Մարզի ճանապարհաշինության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագիրը և բյուջետային հայտը.
15. ուսումնասիրել և գնահատել մարզային (տեղական) նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների առկա վիճակը, իրականացնել ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման մակարդակների գնահատում.
16. պետական կառավարման լիազոր մարմին համաձայնեցման ներկայացնել ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կառուցապատմ

ան նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարնե
րի կողմից ներկայացված հողահատկացումների առաջարկությունները և
նախագծային փաստաթղթերը.

17. ուսումնասիրել և կազմել ճանապարհաշինության ոլորտում առաջնահերթ
լուծում պահանջող խնդիրները, կազմել ծրագրերի ու նախագծա-
նախահաշվային փաստաթղթեր.
18. ուսումնասիրել
մարզային ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում տարբեր
շինությունների, կոմունիկացիաների և գովազդների տեղադրման օրինակ
անությունը.
19. իրազեկել տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին
համայնքների տարածքներում գործող գերեզմանատների մաքրության,
աղբահանության, գերեզմանի վկայականների տրամադրման և հողերի
օգտագործման հատակագծերի մշակման գործընթացի շրջանակներում ի
հայտ եկած թերությունների վերաբերյալ, ձեռնարկել համապատասխան
միջոցներ դրանց վերացման ուղղությամբ.
20. ներկայացնել տեղեկատվություն լիազոր մարմնին աղբի և թափոնների
վերամշակման աշխատանքների կազմակերպման վերաբերյալ.
21. հետևել մարզի
բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բ
արելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման աշխա
տանքներին.
22. ամփոփել արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը
պատճառված վնասների գնահատման, աղետների կանխման, վտանգի
նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ կատարված
աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և
ներկայացնել Մարզպետին.
23. ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել եզրակացություններ Մարզային
նշանակության ճանապարհների, կամուրջների, թունելների,, այլ
ինժեներական կառույցների
շինարարության, պահպանման և շահագործման աշխատանքների
վերաբերյալ.
24. մասնակցել
Մարզի բնակավայրերի էներգետիկ ենթակառուցվածքների և աղբահանու
թյան բարելավման միջոցառումների ծրագրերի մշակման և իրագործման
աշխատանքներին,
Մարզի բնակավայրերի գերեզմանատների գործունեության ուսումնասիրմ
ան և շահագործման ընթացիկ աշխատանքներին.
25. վերահսկել Մարզի հողային հաշվեկշիռի կազմման և Մարզի տարածքում
հողաշինարարության, հողօգտագործման և հողի պահպանման հետ կապված
աշխատանքները.
26. վերլուծել և գնահատել առանց հողի կատեգորիայի փոփոխության
քաղաքաշինական նպատակով առանձին հողամասի գործառական
նշանակության փոփոխության

վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից ներկայացված առաջարկությունը և տալ մեթոդական պարզաբանումներ.

27. նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր քաղաքաշինության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ.
28. մշակել համապատասխան ոլորտի ռազմավարական ծրագրերի, հայեցակարգերի, օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր.
29. Գլխավոր քարտուղարին ներկայացնել Վարչության աշխատանքային ծրագրերը.

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

1. Ուղղություն Ճարտարագիտություն, արդյունաբերություն և շինարարություն
2. Ոլորտ Ճարտարապետություն և շինարարություն

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ արդյունաբերության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ.

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Կառավարում արտակարգ իրավիճակներում
  - Բանակցությունների վարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում
  - Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի գերատեսչական մակարդակում աշխատանքների կազմակերպման և քաղաքականության իրականացման ապահովման և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի, այլ պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ իր իրավասությունների շրջանակներում:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման գործառույթներից բխող խնդիրները և դրանց տալիս լուծումներ կամ մասնակցում է այդ խնդիրների լուծմանը: